* *

ԱՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ

Էջմիածին

Ամենախոր վիշտով իմացանք Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Սրբազնագույն Կաթողիկոսի վախճանման լուրը:

Հանուն Հայաստանի, Վրաստանի և Արևելյան Եվրոպայի մեր Հայ Կաթողիկե Համայնքներուն կու գանք ներկայացնել, մեր անձնական երկյուղած զգացումներով խառն, սրտագին ցավակցություն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո Ս. Էջմիածնի հոգևոր իշխանությանց:

Երկնքի արքայության լույսերուն մեջ հավերժ պայծառանա նորոգ հանգուցյալ երջանկահիշատակ մեծագործ և շինարար Հայրապետի հոգին, ի շարս բազում լուսերամ Կաթողիկոսներու:

Ցավոք անկարող անձամբ մասնակցելու թաղման արարողությանց, եռանձնյա պատգամավորություն մը պիտի գա փոխարինել մեզ:

Մեր հրահանգով, հետ Ս. Պատարագի, հոգեհանգստյան պաշտոններ պիտի կատարվին մեր Հայ Կաթողիկե բոլոր Եկեղեցիներուն մեջ, ի Հայաստան և ի Վրաստան, ի հիշատակ հանգուցյալ Հայրապետին:

Խնկանվեր աղոթքներով, եղբայրորեն վշտակից՝

ՆԵՐՍԵՍ ՏԵՐ-ՆԵՐՍԵՍՅԱՆ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵԲԱՍՏԻՈ ՀԱՅՈՑ ԵՎ
ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑՈՒ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻՑ, ԶԱՆԱԶԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՑ ԵՎ ԱՆՀԱՏ ԱՆՁԱՆՑԻՑ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻՆ

Էջմիածին, Հայաստանի Հանրապետություն

Ստեղծագործության Ակադեմիան ամբողջ հայ ժողովրդի հետ բաժանում է Նորին Սրբություն անմոռանալի Վազգեն Առաջինի մահվան ծանր վիշտը: Մեր հիշողության մեջ երախտագիտությամբ կպահենք այն անգնահատելի ավանդը, որ ներդրել է Նորին Սրբությունը մեր համատեղ գործունեության մեջ՝ իբրև մեր Ակադեմիայի իսկական անդամ: Մենք կաշխատենք ավելացնել այդ ավանդը՝ ի բարօրություն և ի բարգավաճումն աշխարհի ժողովուրդների:

Գ. Պ. ԳԼԱԴԻՇԵՎ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊՐԵԶԻԴԵՆՏ

Մոսկվա, 19 օգոստոս 1994 թ.

* * *

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Սրտի խոր կսկիծով ընդունեցի մեծ Հայրապետի և ժողովրդի կողմից անսահման սիրված հոգևոր Առաջնորդի՝ Կաթողիկոս Վազգեն Առաջինի մահվան լուրը:

Նրա ազնիվ, բարի գործերը, նրա բոլոր գաղափարներն ընդմիշտ մնալու են մեզ հաջորդող սերունդների հիշողության մեջ:

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Երևան, 24 օգոստոս 1994 թ.

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Էջմիածին

Մարտիրոս Սարյանի ընտանիքը խորապես վշտացած է Ամենայն Հայոց Վեհափառ Վազգեն Առաջինի մահվան առթիվ: Նկարչի և Վազգեն Առաջինի ազնվաբարո ու վեհ մարդկային կապերը այսուհետև պիտի կազմեն արվեստագետի կյանքի պատմության խորախորհուրդ էջերից մեկը: Մարտիրոս Սարյանի ողջ գերդաստանը գլխահակ խոնարհվում է մեր ժողովրդի փառահեղ ու լուսավոր նկարագրի տեր Ամենայն Հայոց Վեհափառ Վազգեն Առաջինի շիրիմի առջև:

Երևան, 23 օգոստոս 1994 թ.

* * *

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ

Մեծ վշտով իմացա Ծայրագույն Պատրիարք Նորին Սրբություն Վազգեն Առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահվան լուրը:

Այս մեծ, զարգացած, պարզ և մատչելի մարդու, հայ ժողովրդի արժանավոր զավակի կերպարը, որն իր մեջ մարմնավորում էր ամենայն լավը, և որին ճանաչում էի ես, ընդմիշտ կմնա իմ հիշողության մեջ: Նա խոր իմաստության, մարդասիրության, ազգի հոգատար միավորողի օրինակ էր հանդիսանում:

Ընդունեցեք իմ անկեղծ ցավակցությունները և կարեկցանքը:

Վ. Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆՑ

23 օգոստոս 1994 թ.

* * *

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ԼՂՀ Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահությունը և Նախարարների խորհուրդը, ողջ արցախահայությունը կսկիծով ընդունեցին Ամենայն Հայոց Կաթողիկոս, Ծայրագույն Պատրիարք Վազգեն Առաջինի մահվան բոթը: Կիսում ենք բովանդակ հայությանը պատած մեծ ցավը:

Վշտի այս օրերին, հուսով ենք, Հայ Առաքելական Եկեղեցին սատար է մեր ազգային-ազատագրական պայքարին և աղոթում է մեր ազգային վերածնության համար, որի ջատագովն ու քաջարի զինվորն էր հանգուցյալ Հովվապետը:

Կ. ԲԱԲՈՒՐՅԱՆ
ԼՂՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ
ԼՂՀ ՊՊԿ ՆԱԽԱԳԱՀ

* * *

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾՆԻ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻՆ

Խորապես ցնցված ենք և անհուն վիշտ ենք ապրում մեր սիրելի Հայրապետի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի վախճանման առթիվ:

Մոտ 40 տարիների ընթացքում գահակալելով մեր ժողովրդի և Եկեղեցու համար դժվարին ու բարդ ժամանակներում, Վեհափառը իմաստուն և հավատարակշռված գործունեությամբ կարողացավ անբարենպաստ պայմաններում ոչ միայն պահպանել Եկեղեցին, այլ նաև ամրացնել Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը և շենացնել Մայր Աթոռը: Անուրանալի են Վազգեն Վեհափառի ծառայությունները մեր ազգին և Եկեղեցուն և գերագնահատության ոչ ենթակա:

Միստիկական է, որ նա ականատեսը եղավ իր ժողովրդի ազգային պետականության վերածնմանը, ինչի նախաձեռնողը ջատագովն էր իր ողջ էությամբ:

Խնդրում ենք մեր խորին վիշտը փոխանցել Հայ Առաքելական Եկեղեցու բոլոր նվիրապետական Աթոռներին, բոլոր հոգևորականներին, ազգային-եկեղեցական մարմիններին, մեր ողջ ժողովրդին:

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ԿՐՈՆԻ ԳՈՐԾԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Երևան, 18 օգոստոս 1994 թ.